Հաստատում եմ

Տնօրեն՝ _____Գ. Մեհրաբյան

<<_20__>>____02____2020թ.

Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ ՊՈԱԿ-ի

ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ, ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ և ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

I. Դասավանդման որակի գնահատման ընթացակարգերը

Նշանակությունը և կիրառման ոլորտը

1. Դասավանդման որակի գնահատումը գործընթաց է, որն անհրաժեշտ է դասավանդողի մասնագիտական և մանկավարժական մակարդակն ու դասավանդման փորձը հաստատելու համար:
2. Դասավանդման որակի գնահատումը քոլեջի գործունեության գնահատման չափանիշներից մեկն է:
3. Դասավանդման որակի գնահատումը, ըստ իր բովանդակության և ձևերի, ճկուն և բազմակողմանի ընթացակարգ է: Այն թույլ է տալիս անընդհատ հետևել դասախոսական անձնակազմի դասավանդման որակական ցուցանիշներին և ապահովել դրանց զարգացումը:
4. Դասավանդման որակի գնահատման հիմնական սկզբունքներն են՝ համակարգայնությունը, պարբերականությունը, ուղղվածությունը դեպի կատարելագործում:
5. Դասավանդման որակի պարբերական գնահատումը թույլ է տալիս դասավանդողին հասկանալ, թե որքանով է նա լիարժեք դասավանդում, և բացահայտել դասավանդման գործընթացի թույլ կողմերը, որոնք ենթակա են ուղղման և բարելավման:

Նպատակը և խնդիրները

1. քոլեջում դասավանդման որակի գնահատման ռազմավարական նպատակն է՝ կրթական գործունեության որակի ապահովումը և դասախոսական անձնակազմի հնարավորությունների զարգացումը:
2. Դասավանդման որակի գնահատման խնդիրներն են՝

ա) քոլեջի դասախոսական անձնակազմի գործունեության որակի մշտադիտարկումը,

բ) դասախոսական անձնակազմի մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատումը,

գ) Գնահատման հիման վրա դասախոսական անձնակազմի բարձր մասնագիտական գիտելիքի և որակավորման անընդհատ բարձրացման խթանումը:

դ) քոլեջի շահակիցների հետ կայուն հետադարձ կապի հաստատում, նրանց կարիքների վերհանման, պահանջների ուսումնասիրության և վերլուծության իրականացում:

Գնահատման օբյեկտները և սուբյեկտները

1. Դասավանդման որակի գնահատման հիմնական օբյեկտներն են՝

ա) դասավանդման գործընթացը,

բ) դասավանդման մոտեցումները և մեթոդները,

գ) դասախոսի մասնագիտական և մանկավարժական ունակությունները,

դ) ուսանողներին դասապրոցեսին ներգրավելու կարողությունը և այլն:

2. Դասավանդման որակի գնահատման սուբյեկտը ուսանողությունն է:

ՄԿԾ-ի մեջ ներառված յուրաքանչյուր առարկայի դասավանդումը գնահատվում է տվյալ մասնագիտությամբ սովորող ուսանողների կողմից: Դասավանդման որակի գնահատումը ուսանողի կողմից բաժանվում է 2 փուլի՝

ա) Տվյալ առարկայի դասախոսի մասնագիտական ունակությունների գնահատում , որը կատարվում է ուսանողական հարցման կանոնակարգի համաձայն (Հարցման արդյունքները համարվում են փակ ինֆորմացիա):

բ) դասալսող հանձնաժողովը. քոլեջում պլանավորվում և իրականացվում են դասալսումներ՝ առարկայական հանձնաժողովների նախագահների կողմից, որի նպատակն է քննարկումների միջոցով բարելավել դասավանդման գործընթացը, դասավանդման մոտեցումները և մեթոդները,առաջավոր փորձի փոխանակումը:

գ) ուսումնական մասը. Այն պարբերաբար հետևում է դասախոսական անձնակազմի գործունեությանը և զարգացմանը, մասնակցում է դասալսումներին, կազմում տարեկան գործունեության հաշվետվություն:

դ) շրջանավարտները. դասավանդման գործընթացը գնահատվում է շրջանավարտների կողմից՝ պարզելու, թե որքանով է արդյունավետ դասավանդման գործընթացը, թույլ կողմերը բացահայտելու և բարելավման ուղիներ նախագծելու համար:

ե) արտաքին փորձագետները. դասալսումներ կարող են անցկացվել արտաքին փորձագետների կողմից՝ դասավանդման գործընթացի ուսումնասիրման և գնահատման, առաջավոր փորձի փոխանցման նպատակով:

Դասալսամների կազմակերպում

1. Դասալսման նպատակը դասավանդման գործընթացի արդյունավետության որոշումը և բարելավումն է:
2. Դասալսումը պլանավորվում է և իրականացվում տվյալ առարկայական հանձնաժողովի նախագահի կողմից՝ համաձայն նախօրոք կազմված ժամանակացույցի:
3. Դասալսումներ կազմակերպվում է նաև Կրթության որակի պատասխանատուի կողմից:
4. Դասալսումները կարող են կրել պլանային և ոչ պլանային բնույթ:
5. Դասալսումները հիմնականում անցկացվում են՝

ա) սկսնակ դասախոսների մոտ՝ դասավանդման հմտությունները պարզելու համար,

բ) որակավորումը բարձրացնող դասախոսների մոտ,

գ) ուսանողների կողմից ցածր գնահատվող դասախոսի մոտ:

դ) Դասալսումները իրականացվում են ըստ «Դասալսումներ: Դասի վերլուծություն» ձևաթղթի (դասալսումների մատյան)

ե) Դասալսմանը մասնակցում է և/կամ կարող է իրականացնել նաև ուս.աշխ. գծով տնօրենի տեղակալը:

զ) Դասալսման արդյունքում լրացվում է ձևաթերթը, որը ներառում է դասալսման չափանիշները՝ մանկավարժական վարպետության վերլուծությունը. նշվում են դրական կողմերը, թերությունները, կատարվող դիտողությունները և առաջարկությունները, հետևությունները, և դրանք քննարկվում են առարկան դասավանդող դասախոսի հետ:

է) Տարեկան դասալսումների արդյունքում կազմվում է վերլուծական հաշվետվություն:

II. Դասավանդման որակի գնահատման մեխանիզմները

1. Դասավանդման որակի գնահատման ընթացակարգերը հիմնված են սոցիոլոգիական հարցումների (ուսանողների անկետավորում) և այլ մեթոդների վրա:
2. դասավանդման որակի գնահատման հիմնական ձևերն են՝ հարցումները, անկետավորումը, փաստաթղթերի ուսումնասիրությունը և վերլուծությունը, մշտադիտարկումը:
3. Դասավանդման որակի գնահատման մեթոդները գնահատման համակարգի կարևոր տարրերից մեկն է: Գնահատման նպատակներից կախված՝ դրանք կատարվում են հետևյալ մեթոդներով՝

ա. Գնահատման համար ինֆորմացիայի հավաքագրման (հարցումներ, անկետավորում, փաստաթղթերի վերլուծություն),
բ. Ինֆորմացիայի մշակման և գնահատման (քանակական և որակական),
գ. Գնահատման արդյունքների ներկայացման և հավաքագրման (դիագրամներ, անալիտիկ նյութեր, լրացված հարցման թերթիկներ և այլն):

III. Գնահատման գործիքներն են՝

ա. Դասալսման թերթիկ,
բ. Հարցման թերթիկներ:
1. Գնահատման պարբերականությունը. Դասավանդման որակի գնահատումը քոլեջում իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական տարի՝ ըստ նախօրոք կազմված պլանի:
2. Պատասխանատուներ և իրավասություններ. Ընթացակարգի մշակման կազմակերպման համար պատասխանատու է ուս. աշխատանքների գծով տնօրենի տեղակալը և Կրթության որակի պատասխանատուն: Ընթացակարգի իրականացման համար պատասխանատու են առարկայական հանձնաժողովների նախագահները, ուս. մասը, Կրթության որակի պատասխանատուն: